

Կ-509²-05.05.2014-ՊԻ-010/2

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«Ձինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու
մասին**

Հոդված 1. «Ձինապարտության մասին » Հայաստանի Հանրապետության՝ 1998 թվականի սեպտեմբերի 16-ի թիվ ՀՕ-250 օրենքի (այսուհետ՝ օրենք) 4-րդ հոդվածի 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«6. Հայաստանի Հանրապետության դիվանագիտական և հյուպատոսական մարմինները պարտավոր են՝

ա) Հայաստանի Հանրապետության զինվորական կոմիսարիատից ստացված իրազեկման հիման վրա իրենց հյուպատոսական տարածաշրջանում հյուպատոսական հաշվառման կանգնած զորակոչիկին Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով ծանուցել դիվանագիտական մարմին կամ հյուպատոսական հիմնարկ ներկայանալու համար և ներկայացած անձանց ստորագրությամբ ծանուցագիր հանձնել պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելու մասին.

բ) իրենց հյուպատոսական տարածաշրջանում հյուպատոսական հաշվառման կանգնած զինապարտի վերաբերյալ տվյալները երկշաբաթյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով տրամադրել Հայաստանի Հանրապետության զինվորական կոմիսարիատին.

գ) իրենց իրավասությունների շրջանակներում աջակցել նախագորակոչիկների և զորակոչիկների վերադարձին Հայաստանի Հանրապետություն:

Հոդված 2. Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Հայաստանի Հանրապետությունում ըստ բնակության վայրի հաշվառում չունեցող և հյուպատոսական հաշվառման կանգնած զինապարտների զինվորական հաշվառումը կատարում է Հայաստանի Հանրապետության զինվորական կոմիսարիատը»:

Հոդված 3. Օրենքի 6-րդ հոդվածի՝

1) 1-ին և 4-րդ կետերում «կոմիսարիատ» բառից հետո «(դիվանագիտական, հյուպատոսական մարմիններ)» բառերը հանել:

2) 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Հաշվառման (հաշվառում չունեցողները՝ փաստացի բնակության) վայրը փոխելու դեպքում զինապարտները զինվորական հաշվառման կանգնելու համար պարտավոր են ներկայանալ համապատասխան զինվորական կոմիսարիատ՝ հաշվառման (հաշվառում չունեցողները՝ փաստացի բնակության) նոր վայր ժամանելուց հետո՝ յոթնօրյա ժամկետում:

Ձինվորական ծառայության ընթացքում դատապարտված և ազատագրված ձևով պատիժ կրած անձինք պարտավոր են պատժի կրումից ազատվելու պահից յոթնօրյա ժամկետում ներկայանալ հաշվառման (հաշվառում չունեցողները՝ փաստացի բնակության) վայրի զինվորական կոմիսարիատ:»

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված «Բնակչության պետական ռեգիստրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հյուպատոսական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ

առաջարկությունների

h/h	Առաջարկության հեղինակը	Առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Ծանոթություն, կատարված փոփոխությունները
1	2	3	4	5
1	ՀՀ կառավարություն	Պահպանել «Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ կետը:	Ընդունվել է	«Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ կետում պահպանվել է գործող ձևակերպումը և վերջում ավելացվել է «և նշելով հյուպատոսական հաշվառման հասցեն»: Նպատակն այն է, որ քաղաքացուն ՀՀ հաշվառումից հանելու դեպքում ռեգիստրում պարտադիր մուտքագրվի քաղաքացու օտարերկրյա պետությունում բնակության հասցեն՝ հյուպատոսական հաշվառման հասցեն: Արդյունքում չի լինի այնպիսի իրավիճակ, երբ քաղաքացին չունի ՀՀ-ում հաշվառում և ոչ էլ հայտնի է, թե որտեղ է նա գտնվում: Նշված կետը պահպանելու հետ կապված օրենքի նախագծի հոդված 3-ով առաջարկվող կետը՝ «2. ՀՀ տարածքից դուրս 180 օրից ավելի ժամկետով բնակվելու նպատակով հյուպատոսական հաշվառման կանգնած քաղաքացին բնակչության պետական ռեգիստրում հաշվառվում է օտարերկրյա պետությունում իր բնակության վայրի հասցեով:» փոխարինվել է հետևյալ ձևակերպմամբ. «2. ՀՀ տարածքից դուրս 183 օրից ավելի ժամկետով բնակվելու նպատակով հյուպատոսական հաշվառման կանգնած ՀՀ քաղաքացիների մասին տվյալները համապատասխան դիվանագիտական ներկայացուցչությունը կամ հյուպատոսական հիմնարկը կամ ՀՀ արտաքին գործերի նախարարությունը յոթնօրյա ժամկետում պաշտոնապես տեղեկացնում է կենտրոնական ռեգիստր վարող մարմնին:»

				Օրենքի ընդունումից հետո, կառավարության համապատասխան որոշմամբ հյուպատոսական հաշվառման ավտոմատացված համակարգ տվյալների մուտքագրումը կհամարվի պաշտոնապես տեղեկացնելու միջոց:
2	ՀՀ կառավարություն	Քաղաքացու ՀՀ տարածքում կամ ՀՀ տարածքից դուրս բնակվելու հանգամանքը հաշվարկելու համար սահմանված օրերի թիվը հստակեցնել, որպեսզի բացառվեն հակասական իրավիճակները, օրինակ՝ քաղաքացին 181 օր բնակվել է ՀՀ տարածքից դուրս և 181 օր էլ բնակվել է ՀՀ տարածքում, մինչդեռ տարին ունի 365 (366) օր:	Ընդունվել է	ՀՀ մաքսային օրենսգրքի 105-րդ հոդվածում և «Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքի համապատասխան կետերում կատարվել է փոփոխություն: Նոր ձևակերպմամբ նշվում է «183 օրից ավելի»: Այս ձևակերպումը համապատասխանում է նաև «Եկամտային հարկի օրենքի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածում օգտագործված ձևակերպման հետ, որտեղ տրված է «ռեգիդենտ» հասկացությունը, այն տարբերությամբ, որ «183 օր և ավելի» ձևակերպման փոխարեն, կիրառվել է «183 օրից ավելի» ձևակերպումը, քանի որ առաջինի դեպքում, եթե լինի նահանջ տարի, ապա ճիշտ 183 օր ՀՀ տարածքում և ճիշտ 183 օր ՀՀ տարածքից դուրս բնակվելու դեպքում հավասար իրավիճակ կառաջանա: Իսկ «183 օրից ավելի» ձևակերպման դեպքում դա բացառվում է:
3	ՀՀ կառավարություն	Օրենքում հստակ սահմանել, թե ինչ եղանակով կարող են քաղաքացիները հայտնել իրենց անհատական տվյալները:	Ընդունվել է	«Հյուպատոսական ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծում ավելացվել է նոր կետ հետևյալ բովանդակությամբ. «ՀՀ քաղաքացիները հյուպատոսական հաշվառման կանգնելու համար իրենց անհատական տվյալները կարող են ներկայացնել անձամբ, փոստով կամ հյուպատոսական հաշվառման ավտոմատացված համակարգի միջոցով:»
4	ՀՀ կառավարություն	Հստակեցնել, թե մաքսային մարմիններին լիազոր մարմնի կողմից կոնկրետ ինչ տեղեկատվություն պետք է ներկայացվի:	Ընդունվել է	ՀՀ մաքսային օրենսգրքի 105-րդ հոդվածի նախագծում հստակեցվել է, որ քաղաքացու ՀՀ տարածքից դուրս և ՀՀ տարածքում մշտապես բնակվելու հանգամանքը և ժամանակահատվածը որոշվում է լիազոր մարմնի կողմից ՀՀ մաքսային մարմիններին պաշտոնապես տրամադրած՝ տվյալ քաղաքացու կողմից ՀՀ պետական սահմանը հատելու վերաբերյալ տեղեկատվության հիման վրա:

				Բացի այդ, նախագծում, «ՀՀ տարածքից դուրս մշտապես բնակված» և «ՀՀ տարածքում մշտապես բնակված» հասկացությունների սահմանումներում ավելացվել է «Սույն օրենքի իմաստով» ձևակերպումը: Նաև ավելացվել է «ընդհանուր առմամբ» ձևակերպումը, որպեսզի առավել հստակ և միանշանակ հասկացվի այն, որ ՀՀ տարածում և ՀՀ տարածքից դուրս մշտապես բնակվելու հանգամանքը որոշվում է ոչ թե յուրաքանչյուր տարում չընդհատվող 183 օրերի, այլ յուրաքանչյուր տարվա ընթացքում ընդհանուր առմամբ 183 օրերի հաշվարկով:
5	ՀՀ կառավարություն	Մաքսային օրենսգրքում հստակեցնել «մշտական բնակության ժամանելու օր» հասկացությունը:	Ընդունվել է	«իր մշտական բնակության երկրից ՀՀ ժամանելու,» բառերը փոխարինվել են «իր մշտական բնակության երկրից ՀՀ ժամանելուց հետո՝ ՀՀ-ում հաշվառվելու օրը, իսկ ՀՀ-ում հաշվառում ունենալու դեպքում՝ մաքսային մարմին դիմելու օրը» բառերով
6	ՀՀ կառավարություն	Առաջարկում ենք ներդնել քաղաքացիական կացության ակտերի գրանցման միասնական էլեկտրոնային կառավարման համակարգ և միասնական էլեկտրոնային գրանցամատյան, ինչպես նաև սահմանել դրա հետ կապված քաղաքացիական կացության ակտերի համար դիմելը:	Ընդունվել է	Փաթեթի մեջ է ներառվել համապատասխան փոփոխություններ առաջարկող «Քաղաքացիական կացության ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ: